Ա.Ս. ՊՈՒՇԿԻՆ

# ԿՈՎԿԱՍՅԻ ԳԵՐԻՆ

ԴԵՏՍՐԱՏ

13128

## ՆՎԻՐՈՒՄՆ

Ընդունիր դու ջերմ ժպիտով, ընկեր,
Նվիրաբերումն ազատ մուսայի։
Քեզ նվիրեցի ահա հալածված քնարի յերգեր,
Ցեվ ներշնչումը իմ ազատ պահի։
Ցերբ առանց մեղքի ու անմխիթար կործանվում եյի,
Ցեվ զբրպարտության շշուկը լսում ամեն կողմերից,
Ցեվ դաշույնը սառ դավաճանության,
Ցերբ սիրո ծանր յերազները ինձ
Մորմոքում եյին և մահացնում,
Քեզ մոտ դեռևս յես գտնում եյի իմ հանգստությունն.
Ցեվ հանդչում եյի յես սրտով—իրար սիրում եյինք մենք։
Վրաս փոթորկի մոլեգնությունը դարձավ ուժասպառ,
Ցես աստվածներին որհնեցի խաղաղ ապաստարանում։
Ցեվ մեր անջատման տխուր որերին,

Խոհերով լեցուն հնչյունները իմ,
Ահա Կովկասը ինձ հիշեցրին,
Ուր խոժոռադեմ, այդ վեհ, մենակյաց Բեշտա-
ուն անհաս՝
Աուլներին և դաշտերին տիրող հինգ գագաթ-
ներին,
Ինձ համար յեղավ մի նոր, նոր Պառնաս։
Կմոռանա՞մ յես այն գայլախազի գագաթները
վեհ,
Յեվ վշվշացող աղբյուրները այն և թոշնած
դաշտերը,
Անապատներ տապ, յերկիր, ուր ինձ հետ կիսե-
ցիր այնպես
Դու ջահել հոգու ապավորումներ,
Ուր ավազակությունն ե ռազմատենչ վազում
լեռներում,
Վայրի հանճարը վոգևորության
Խորունկ լռության մեջ և թաղնվում.
Կգտնես այստեղ հուշերի շարան՝
Գուցե քո սրտին սիրելի որեր,—
Յեվ տենչանքների շատ հակասություն,
Տառապանք ծանոթ, ծանոթ յերազներ,
Յեվ իմ հոգու մեղմ շշունջը թաղուն։
Կյանքում մենք տարբեր ճամբով գնացինք.
հանգստի գրկում
Հալվի դու հալվի ծաղկեցիր և քո հերոս հոր
հետքով



Նետերի ամպի ներքո թշնամու, արյունոտ
դաշտում,
Ընտրյալ մանուկ, սլացար և դու հպարտ թռիչ-
քով։
Ինչպես քաղցր զոհ, ինչպես հույսերի մի ծա-
ղիկ շիտակ,
Քեզ փայփայեց նա՝ քո հայրենիքը գուրգու-
րանքով լի։
Յես վաղ զգացի վիշտը և ընկա հալածանքի
տակ,
Յեղա զոհ դավի, զրպարտանքների և ագահների։
Բայց ազատությամբ և համբերությամբ սիրտս
կոփելով,
Սպասեցի անհոգ յես որերին վառ,
Զընկճվեց պոետն—յերջանկությունը բարեկամ-
ներիս
Քաղցր ըսփոփանք յեղավ ինձ համար։

## ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

Ասլում, իրենց շեմքերին մոտիկ,
Ձերքեզներն ահա պարապ նստոտած,
Խոսում են նրանք՝ Կովկասի վորդիք,
Ռազմի, կործանիչ գուժերից անցած,
Դեղեցկությունից իրենց ձիերի,
Վայրի գգվանքի վայելքներից շատ,
Հիշում են նրանք անցած որերի
Հարձակումները անհաղթ, անվկանդ,
Խաբեյություններ նենգ իշխանների,
Նրանց թրերի զարկերը դաժան,
Ցեվ դիպուկ նետերն անխուսափելի,
Ավեր գյուղերի մոխիրներն այնքան,
Գգվանքը սևաչ գերուհիների։

Ցեվ զրույցներն են հոսում անդորրում,
Լուսինն է լողում գիշերվա մուժում.

Հանկարծ նրանց դեմ՝ նստած իր ձիուն—
Մի չերքեզ։ Արագ՝ արկանով քաշում,
Բերում է իր հետ մի ջահել գերի։
Ահա ռուս,—գոռաց բռնողն ավարի։
Այդ կանչի վրա վազեց դեպի ցած
Աուլն անողոք բազմությունններով,
Սակայն գերին այդ և համբ և սառած,
Ցեվ այլանդակված գլխով ու դեմքով՝
Դիակի նման մնում եր անշարժ։
Թշնամիների դեմքը չի տեսնում,
Չի լսում աղմուկ, սպառնալիքներ.
Իր գլխին մահվան քունն է սավառնում
Ցեվ սառնություն է շնչում մահաբեր։
Ցեվ յերիտասարդ գերին դեռ յերկար
Պառկել եր ծանր ուշաթափ յեղած,
Իր գլխի վրա կեսորն արևառ
Արդեն վառվում եր ուրախ փայլ առած.
Ցեվ վոգին կյանքի զարթնեց նրա մեջ,
Անորոշ տնքոց լսվեց շուրթերում.
Արեգակի ջերմ շողով տաքացած՝
Թշվառը կամաց տեղից բարձրանում,
Աղոտ հայացք է գցում չորս բոլոր...
Ցեվ տեսնում է, վոր իր դեմն անառիկ



Լեռնակույտեր են կանգնել հանդիման—
Վորջեր ավազակ անահ ցեղերի,
Չերքեզյան ազատ կյանքի ապաստան։
Իր գերությունը հիշեց պատանին,
Ինչպես յերազի սոսկալի տագնապ,
Ցեվ լսեց ահա, վոր զրնգացին
Հանկարծ վոտները իր շղթայակապ։
Ամեն բան ասաց ձայնն այդ սարսռուն,
Բնությունն իր դեմ դարձավ մթագնած։
Մնաս բարով, դու սուրբ ազատություն...
Նա ճորտ է։

Պառկած՝ հյուղի յետևում—
Փշերով պատած ցանկապատերում։
Չերքեզներն դաշտումն են—չկա հսկող,
Ամեն ինչ լուռ է դատարկ աուլում.
Նրա դեմ ահա հազած կանաչ քող՝
Հարթավայրերն են ամայի փռվում.
Այնտեղ միակերպ գագաթներով կոր
Բլուրների պարն է ահա ձգվում.
Նրանց արանքում ճամբան մենավոր
Անհետանում է մռայլված հեռվում։
Ցեվ կուրծքը ահա ջահել այդ գերու
Ալեկոծվում է ծանր խոհերում...

Տանում է հեռու ճամբան Ռուսաստան,
Յերկիրն, ուր հպարտ, անհոգ սկսեց
Նա վառ որերը իր ջահելության,
Ուր վոր առաջին խինդը ըմբռնեց,
Ու իր սիրածին սիրեց անսահման,
Ուր վոր հասկացավ տանջանքն ահարկու,
Ուր փոթորկալի կյանքով խորտակեց
Հույսեր, խնդություն, ըղձերն իր հոգու.
Յեվ լավ որերի հուշերը անեղծ
Նա իր թառամած սրտում ամփոփեց.

. . . . . .

. . . . . .

Մարդկանց ու աշխարհն փորձեց ու յեղավ
Տմարդի կյանքի գնին նա տեղյակ,
Մտերիմների սրտում գտավ դավ,
Սիրո տենչերում՝ անմիտ մի յերազ.
Հոգնած՝ հասարակ մի զոհ լինելուց —
Վաղուց անարգված սին ունայնության,
Յեվ թշնամական, չար յերկդիմության,
Յեվ պարզմտանի բամբասանքների,
Ընկերն բնության—լքողն աշխարհի—
Թողեց յերկիրը նա իր հարազատ,
Թռավ նա հողը հեռավոր յերկրի,



Վեհ ազատության ցնորքով զվարթ։

Ազատությունն, քեզ, նա քեզ եր մենակ
Ունայն աշխարհում փնտրում դեռ յերկար։
Սիրտը խորտակած իր կրքերի տակ,
Անտարբեր՝ դեպի ըղձեր ու քնար,
Հուզմունքով լեցուն լսում եր բոլոր
Քեզնով ներշնչված յերգերը հզոր.
Յեվ հավատով լի, աղոթքներով հուր
Քո հպարտ կուռքն եր նա գրկում ամուր։

Վերջացավ... Վորպես նպատակ հույսի
Աշխարհում վոչինչ նա ել չի տեսնում.
Յեվ դուք, դուք նրա յերազներ վերջին,
Յեվ դուք եք նրա աչքից թաքնվում։
Նա ճորտ է։ Հակած գլուխը քարին՝
Սպասում է նա, վոր մայրամուտին
Իր տխուր կյանքի բոցն ել կմարի,
Յեվ ծարավում է դամբանի շուքին։

Լեռան յետևում արևն է մթնում.
Հեռվում թնդյուն է հնչում աղմուկով.
Ժողովուրդն հանդից առվն է մտնում
Փայլուն, շողշողուն գերանդիներով։

Յեկան։ Վառվեցին լույսեր տներում,
Յեվ քիչ-քիչ լռեց աղմուկը անկարգ,
Յեվ գիշերային խաղաղ սավերում
Գրկվեց ամեն ինչ՝ գգվանքով հանդարտ.
Քարոտ ճամբեքով վազելով արագ՝
Շողում ե հեռվում լեռնային աղբյուր.
Կովկասի քնած գագաթները լուռ,
Հագել են ամպի սպիտակ վերմակ...
Բայց ո՞վ ե ահա լուսնի շողերով
Խորին լռության մեջ գալիս կամաց,
Թույլ, գաղտագողի քայլեր անելով։
Ռուսն ուշքի յեկավ։ Նրա դեմ դիմաց
Համր, նրբագեղ վողջույնով ահա
Մի ջահել չերքեզ աղջիկ ե կանգնած։
Յեվ լուռ նայում ե նա այդ աղջկան,
Խորհում ե, վոր սուտ մի յերազ ե այն,
Հոգնած հույզերի մի խաղ ե դատարկ։
Լուսնի շողերով քիչ լուսավորված՝
Փպիտով սփոփիչ խղճահարության,
Ծունկի իջնելով՝ աղջիկը կամաց
Սառը կուժիսը բռնած իր ձեռքին՝
Հանդարտ մատուցեց գերու շրթունքին։
Բայց նա մոռացավ անութն այդ բուժիչ,



Ծարավի հոգով վորոնում եր նա
Հաճելի խոսքի հնչյունը դյութիչ,
Յեվ հայացքները ջահել աղջկա։
Նա չի հասկանում խոսքերը ոտար,
Բայց նուրբ հայացքը, ջերմը այտերի,
Բայց ձայնը քնքույշ ասում ե ահա—
Ապրիր... և կյանք ե ստանում գերին։
Յեվ հավաքելով մնացորդն ուժի,
Այդ հոգեպարար հրամանին հլու,
Բարձրացավ փոքր ինչ գավաթով բուժիչ
Կոտրեց ծարավի տանջանքները լուռ։
Հետո նա նորից քարին ե թեքում
Ծանրաբեռնված գլուխը իրա,
Սակայն մարմրուն հայացքը նրա,
Չերքեզուհուն եր շարունակ ձգտում։
Յեվ նրա դիմաց յերկար ու յերկար
Նստեց աղջիկը խոհերով լեցուն,
Յեվ կարծես համր իր կարեկցանքով
Նա սփոփել եր ցանկանում գերուն։
Շուրթերն ամեն ժամ՝ իր կամքից անկախ,
Սկսվող խոսքի հետ բացվում եյին.
Նա հառաչում եր և աչքերն հանախ
Արտասուքներով վողողվում եյին։

ՀԱՅԿ-ՍՍՌ
Մ. Ա. Մեսրոպյան
անվան

Անցկացան որեր, նման ստվերի։
Լեռներում՝ հոսի մոտը շղթայված,
Անց է կացնում իր որերը գերին։
Քարանձաքերի զովությունը թաց
Ծածկում է նրան ամռան շոգերին,
Իսկ յերբ լուսնեղջյուրն արծաթյա շողով
Փայլում է մռայլ սարի յետևում,
Ձերքեզուհին այն, շուքոտ կածանով,
Գերի տղային գինի յե բերում.
Բերում է կումիս, բուրող մեղրահաց,
Բերում է և հաց՝ ճերմակ, ինչպես ձյուն.
Նրա հետ թաքուն ընթրիք բաց արած՝
Քնքույշ հայացքը նրան է հառում,
Ձուլում է խոսքին անհասկանալի՝
Խոսակցությունը աչքի նշանի՝
Յերգում նրա մոտ և յերգ լեռների,
Յեվ յերգն յերջանիկ վրաց աշխարհի։
Յեվ հիշողությունն անհամբերատար
Նրան հաղորդում է լեզուն ոտար։
Առաջին անգամ հոգով կուսական
Սիրեց, ճաշակեց նա յերջանկություն.
Բայց ոուսը վաղուց կորցրել եր արդեն
Իր ջահել կյանքի հեշտասիրությունն։



Սրտով պատասխան տալ չկարաց նա
Սիրոն մանկական, սիրոն սրտաբաց—
Վախեցավ, գուցե մտքում արթնանա
Մոռացված սիրո յերազը հանկարծ։

Հանկարծ չի թոշնում մեր ջահելությունն,
Հանկարծ չեն լքում բերկրանքները մեզ,
Անսպասելի մի ուրախություն
Կհամակի մեզ դեռ հաճախապես։
Բայց դուք, կենդանի տպավորություններ,
Յեվ սկզբնական դու սեր առաջին,
Հափշտակության յերկնային դու բաց—
Դուք սավառնելով չեք դառնում կրկին։
Յեվ թվում եր, թե գերին այդ անհույս
Ընտելանում եր իր կյանքին տրտում։
Գերության թախիծ—հուրը խռովահույզ,
Թագցնում եր նա իր հոգու խորքում։
Մռայլ ժայռերի մեջ թափառելով,
Վաղ առավոտվա զով կիսամութին,
Հառում եր նա իր հայացքն հիացքով
Հեռվում բարձրացող լեռների կույտին՝
Ճերմակ, կարմրավուն, կապույտ
յերանգով։

Սքանչելի և շքեղ պատկերներ...
Հավիտենական գահերը ձյունի,
Աչքին թվում եր, վոր այդ գագաթներն
Ամպերի անշարժ շղթա յե հիմի,
Նրանց շրջանում յերկգլուխ վիթխարին,
Շողշողալով իր սառցե պսակում՝
Ելբրուսն է ահա վեհ ու ահագին
Յերկնի կապույտում տալիս ճերմակին։
Յեվ յերբ՝ խառնված խուլ դղրդներին,
Փոթորկից առաջ վորոտն եր թնդում,
Հաճախ եր դերին առլի գլխին՝
Առանց շարժվելու, լեռանը նստում։
Ամպերըն եյին մխում վոտքի մոտ,
Փոշին պտտվում թռչում եր հանդում,
Յեղջերուն արդեն վազում եր յերկչոտ՝
Անկյուն փնտռելու ժայռի արանքում։
Յեվ արծիվները՝ քերծերից յելնում,
Յերկնքում իրար ձայն եյին տալի,
Ջոկերի աղմուկ, հոտերի մայուն,
Խլացընում եր մրրիկն ահալի։
Յեվ հանկարծ դաշտում անձրև ու
կարկուտ
Թափվում են ամպից, կայծակի միջով։



Ու ավերելով զառիվայր ու խութ,
Դարավոր քարերն տեղից շարժելով՝
Հեղեղներ եյին հոսում անձրևի—
Իսկ դերին՝ այնտեղ, կատարին լեռան
Վորոտուն ամպից դենը, մեն-միայն,
Ամպրոպի համար անհասանելի,
Սպասում եր լուռ դարձին արևի.
Յեվ մրրիկների վոռնոցը անթափ
Ունկնդրում եր նա ինչ վոր խնդությամբ։

Բայց յեվրոպացու վողջ ուշքը դարձավ
Դեպի ժողովուրդն այս ըսքանչելի.
Նրանց հավատը, բարքերը տեսավ,
Դաստիարակումը լեռնականների,
Յեվ պարզությունը սիրեց այդ կյանքի,
Հյուրընկալություն, ծարավը ռազմի,
Արագությունը աղատ շարժմունքի,
Վազքը թեթևոտ և ուժը բազկի.
Նստում, նայում եր նա յերկար ժամեր՝
Ինչպես յերբեմըն չերքեզը սրտոտ
Անցնում եր արձակ դաշտեր ու լեռներ
Հագին յափունջի, գլխարկով բրդոդ,
Թեքված ազեղին, ամուր հենելով

Բարեկազմ վոտներն ասպանդակներին՝
Սլանում եր նա նժույգի կամքով,
Նախորոք իրեն վարժելով մարտին։
Հիանում եր նա հագուստով նրանց՝
Թե պատերազմի և թե հասարակ.
Չերքեզը զենքով ե միշտ զարդարված,
Հպարտ և գոհ ե նա զենքերի տակ.
Վրան կապարճը հրրազեն, վահան,
Կուրանյան աղեղ, դաշույն ու արկան,
Ընկերուհին ե իր թուրը հավերժ՝
Թե պարապ պահին և թե գործի մեջ։
Վոչինչ, վոչ մի բան նրան չի ընկճում,
Վոչ վոք չի խփի—հեծյալ, հետիոտ՝
Միշտ միևնույնն ե, ու միշտ նույն
տեսքում
Յեվ անհաղթելի և միշտ անհողդողդ։
Սարսափն ե անհոգ վողջ կազակների՝
Հպարտությունն իր—նժույգն անվեհեր—
Սերունդ լեռնային յերամակների,
Մի համբերատար, հնազանդ ընկեր։
Բարձր խ՝տում կամ այրում նրա հետ
Ենդ ավ՝ ր՝ռ՝ւ՝ն մտնում ե դարան,
Հանկարծ ինչպես մի անակնկալ նետ՝



Ճամբորդ տեսնելով նետվում ե վրան։
Կովի յելքն անդավ մի ակնթարթում
Վճռում ե նրա հարվածը կարող,
Յեվ ուղևորին լեռնային կիրճով
Քաշում ե արդեն արկանը թռչող։
Սլանում ե ձին իր ամբողջ թափով,
Լցված հրեղեն մի արիությամբ,
Թփեր, ճահիճներ, ժայռ, ձոր ու անտառ—
Ազատ ճամբա յեն բոլորն իր համար։
Յետևից հետքն ե վազում արնամած,
Ամայության մեջ հնչում ե դոփյուն.
Դեմը գետակն ե աղմկում փրփրած—
Սլանում ե նա խորքովը յեռուն։
Ճամբորդը նետված հատակը ջրի
Պղտոր ալիքն ե այնտեղ կուլ տալի,
Ուժասպառ դարձած աղերսում ե մահ,
Տեսնում ե նրան իր դիմաց ահա։
Բայց նետի նման զորավոր իր ձին
Փրփրադեզ ափն ե հանում չերքեզին։

Կամ թե ճյուղավոր մի կոճղ բռնելով՝
Վոր փոթորիկն ե նետել գետն ի վեր,
Յերբ վոր, շղարշի պես՝ բլուրներով

Լուսնազուրկ գիշերն է փռում ըստվեր,
Ձերքեզն արմատի վրա դարավոր
Կախում է ամեն ճյուղից՝ չորս բոլոր,
Իրեն մարտական զենք ու զրահներ,
Վահան, սաղավարտ, զրահ, յատունջի,
Կապարճ ու աղեղ—նրա յետևից՝
Առանց հոգնելու, առանց շշունջի
Նետվում է ինքն էլ գետը փրփրալից։
Գիշեր է խորունկ։ Գետն է շառաչում,
Զորավոր հոսանքն է նրան քաշում
Անծայր յերկայնքով հեռու ափերի
Ուր վեր բարձրացած հողաթմբերին՝
Ցեքված նիզակին, գիշերվա մթնում,
Կազակներն գետի մութ վազքն են
դիտում—
Իսկ սևին տալով խիտ մառախուղում,
Զարագործի զենքն առաջ է լողում...
Ինչի՞ մասին ես մտածում, կազակ,
Նախկին մարտերն ես մտաբերում դու,
Մահվան դաշտի մեջ ոթևան ու հա՞րկ,
Փառաբանական աղաթքը գնդում,
Յեվ հայրենի՞քը... Նենգ ու խարդախ
քուն...



Մնացեք բարով, դուք ազատ շեներ,
Յեվ դու, խաղաղ Դոն, և հայրական
տուն,
Պատերազմներ ու սիրուն աղջիկներ.
Ափը դուրս յեկավ թշնամին թաքուն,
Նետն է դուրս գալիս կապարճից նրա,
Սլացիկ թռչում—և կազակն անա
Արնոտված թմբից ներքև է ընկնում։

Իսկ յերբ վոր խաղաղ ընտանիքն առած
Ձերքեզն հայրական բնակարանում
Վատ յեղանակին լինում է նստած,
Յեվ կրակներն են վառվում թաղարում,
Յեվ հավատարիմ ձիուց թռչելով
Յեկվորն ուշացած ամայի ոարում՝
Իջեվանում է նրա ոջախում
Յեվ կրակի մոտ ամաչկոտ նստում՝
Տանտերն այդ պահին, բարեհաճ կամքով,
Յելնում, վողջունում է փաղաքշաբար,
Յեվ մատուցում է բուրող գավաթով
Իր հյուրին՝ կարմիր գինի բերկրավառ։
Թաց յատունջու տակ, հյուղում ծխով լի,
Ծամբորդը խաղաղ քուն է վայելում,

Յեվ առավոտյան թողնում ե ելի
Հյուրընկալ հարկը, գնում, հեռանում։

Պատահում եր, վոր ուրախ բայրամին
Պատանիներն են բազմությամբ խմբվում.
Յեվ փոխարինում ե խաղը-խաղին.
Մերթ սպառելով կապարճը լեցուն՝
Նրանք թևավոր նետերով իրենց
Արծիվներին են խոցում ամպերում,
Մերթ բլուրներից ժայռող բարձրաբերձ,
Նրանք շարքերով իրենց անհամբեր,
Նշան տալուն պես՝ թափվում են
հանկարծ,
Հարվածում հողը, ինչպես յեղնիկներ,
Վողջ հարթավայրը ծածկում փոշու տակ,
Յեվ վազ են տալիս, դոփում ներդաշնակ։

Բայց տխուր ե այս աշխարհն միակերպ
Սրտերին, ծնված մարտերի համար,
Յեվ հաճախ խաղերն ազատ տոնական,
Լինում են դաժան խաղերի հետ խառ։
Հաճախ են փայլում թրերն ահալի,
Խնճույքների խենթ կայտառությամբ լի,



Յեվ գլուխներն են թռչում ձորտերի,
Յեվ մանուկներն են ուրախ ծափ տալի։

Սակայն դիտում եր ռուսը անտարբեր
Զվարճություններն այս արյունալի,
Սիրում եր առաջ նա փառքի խաղեր,
Այրվում կործանման ծարավովը լի։
Նա՝ գերի պատվին իր անագորույն,
Տեսնում եր վախճանն իր դեմ հանդիման,
Սառը և հաստատ մենամարտերում,
Դիմավորելով կապարին մահվան։
Գույն խոհերի տակ ծանրաբեռնված
Այն ժամանակներն եր մըտաբերում,
Յերբ, ընկերներով իր շրջապատված՝
Նա աղմկաձայն խնճույք եր անում...
Արդյոք ափսոսում եր որերն անցած,
Որերը բոլոր խաբված հույսերի,
Թե դիտում եր նա հետաքրքրված՝
Դաժան պարզությամբ նրանց խաղերի։
Յեվ վողջ բարքերը բիրտ ժողովրդի
Կարդում եր նա այս ճշգրիտ հայելում,
Խորին լռությամբ պահում եր թաքուն,
Շարժումներն ամբողջ դերին իր սրտի,

Փոփոխություններ չեյին նկատվում
Նրա բարձրանիստ ու լայն ճակատին։
Խիղախությունից նրա սառնարյուն
Զարմանում եյին չերքեզներն ահեղ,
Նրա ջահել կյանքն եյին խնայում,
Շշնջում եյին իրար հետ այնտեղ,
Հաջող ավարով այդ հպարտանում։

## ՑԵՐԿԻԶՈՐԴ ՄԱՍ

Ճանաչեցիր դու, պղծիկ լեռների,
Զմայլանք սրտի, կյանքի քաղցրություն,
Քո հայացքը հուր, անմեղությամբ լի՝
Արտահայտում եր սեր և խնդություն։
Ցերբ քո ընկերը գիշերվա մթնում
Համբուրում եր քեզ համբ զգվանքով՝
Դու յերկրային կյանքն եյիր մոռանում,
Վառված ցանկությամբ և հաճույքներով։
Դու ասում եյիր—գերի սիրելի,
Ուրախ դարձբրու հայացքդ նկուն,
Դու քո գլուխը իմ կրծքին հենիր,
Մոռցիր հայրենիք և ազատություն։
Ուրախ եմ՝ քեզ հետ թաքնվել ամա
Անապատի մեջ, իմ հոգու արքա.
Սիրիր ինձ, վոչ վոք դեռ մինչև հիմա,
Չի համբուրել իմ աչքերը անգամ։
Ցեվ յերբեք մահճիս մեն ու միայնակ՝

Ջահել ու սևաչ չերքեզը թաքուն
Զի մոտեցել լուռ, գիշեր ժամանակ։
Համարվում եմ յես աղջիկ խստասիրտ,
Յեվ անողոք իմ գեղեցկությունով.
Բայց պատրաստ ե իմ վիճակը շուտով.
Ինձ՝ հայրս, ինչպես և յեղբայրս բիրտ
Ծախել են ուզում չսիրած մարդու,
Ոտար աուլում արժեքով վոսկու.
Հորս, յեղբորրս կաղաչեմ սակայն,
Թե չե՝ կգտնեմ յես դաշույն կամ թույն։
Անընմբռնելի ուժով կախարդուն
Հրապուրվել եմ քեզանով այնքան.
Սիրում եմ յես քեզ, գերի սիրելի,
Հոգիս քեզնով ե զմայլված ու լի...

Սակայն նա անձայն մի ափսոսանքով
Նայում եր կրքոտ աղջկա վրա,
Յեվ լցված ծանր մտածմունքներով
Սիրային խոսքերն եր լսում նրա։
Նա վերացել եր. խոնվել եյին
Հիշողություններն անցած որերի,
Նույնիսկ մի անգամ աչքերից նրա
Արցունքը թափվեց կարկուտի նման։



Նստել եր սրտին նման կապարի
Սիրո թախիծը առանց հույսերի.
Վերջապես ջահել կույսի հանդիման
Թափեց զեղումներն իր տանջանքների։

Մոռացիր դու ինձ. քո զմայլանքին,
Քո անմեղ սիրուն յես չեմ արժանի,
Մի կորցնի ինձ հետ որերը դ անգին,
Կանչիր դու ուրիշ, մի այլ պատանի։
Քեզ համար իր սերն իմ հոգու, սրտի,
Թախծոտ սառնության կփոխարինի.
Կլինի շիտակ, կըգնահատի
Հայացքդ քնքույշ, տեսքդ գեղանի,
Յեվ ջերմությունը ջահել համբույրի,
Յեվ նրբությունը խոսքիդ բոցավառ.
Առանց վայելքի, առանց ցանկության,
Կրքերի զոհ եմ դառնում դալկահար։
Դու դժբախտ սիրո հետքեր ես տեսնում,
Հոգու փոթորկի հետքեր սոսկալի.
Դու թող ինձ. սակայն դու խղճա տրտում
Ճակատագիրն իմ տառապանքով լի.
Դժբախտ բարեկամ, ինչո՞ւ դու առաջ
Չհայտնվեցիր դեմն իմ աչքերի,

Ցերը յես հույսերին և հիասքանչ
Ցերազներին դեռ հավատում էի։
Ցերջանկությունը մեռավ ինձ համար,
Ուշ է։ Հույսերի ցնորքը թռավ.
Ընկերը դողեց հեշտանքները վառ,
Քնքույշ հույզերի համար քարացավ...

«Ինչքան դժվար է՝ շուրթերով մեռած
Կենդան համբույրին գեթ տալ
պատասխան,
Քնքույշ աչքերիդ արտասվակալած
Սառը ժպիտով յելնել հանդիման։
Տանջանք կրելով խանդից ապարդյուն,
Քնելով հոգով քո առանց հույզի,
Քո ընկերուհու տարփալի գրկում,
Ինչ ծանր է խորհել ուրիշի մասին...

«Ցերը այդպես դանդաղ ու այդպես
նրբին
Հագենում ես դու իմ համբույրներով,
Ցեվ քեզ համար այդ ժամերն սիրային
Անցնում են այնպես արագ, անվրդով—
Այդ ժամանակ յես ցրված ու նկուն



Կուլ տալով արցունքն իմ լռության մեջ,
Կանգնած իմ դիմաց, ինչպես յերազում,
Տեսնում եմ մի դեմք՝ սիրելի հավերժ,
Նրան եմ կանչում, դեպի նա ձգտում,
Լռում, չեմ տեսնում, և չեմ լսում քեզ,
Մոռացության մեջ քեզ եմ հանձնվում,
Թաքուն գրկում եմ այդ ցնորքը յես։
Լալիս եմ այստեղ յես նրա համար,
Թափառում է նա ինձ հետ ամենուր,
Ցեվ մռայլ թախծով է նա անդադար
Լցնում վորբացած իմ հոգին տխուր։

«Թող ուրեմն իմ կապանքները ինձ՝
Ցեվ յերազները իմ մեկուսացած,
Հիշողություններ, արցունք ու թախիծ.
Կարեկից լինել չես կարող նրանց։
Խոստովանություն լսեցիր սրտի,
Ներիր ինձ... Ձեռքդ տուր—հրաժեշտի։
Կանացի սերը շուտ է ազատվում
Անջատման սառը տխրություններից.
Անցնում է սերը, ձանձրույթն է պատում,
Ցեվ գեղեցկուհին սիրում է նորից»։

Բաց շրթունքներով աղջիկը նստած
Հեկեկում եր դեռ առանց արցունքի,
Անշարժ հայացքում մշուշով պատած
Արտահայտություն կար նախատինքի.
Դողում եր գունատ, նման ստվերի.
Նրա սառ ձեռները հանգչում եյին
Ձեռների ափում իր սիրահարի.
Յեվ ի վերջո իր վշտերն սիրային
Տխուր խոսքերի միջով հորդեցին.

«Ախ ռուս իմ, ռուս իմ, ախ ինչու համար,
Ճանաչելով յես քո սիրտը լուռ,
Յես քեզ հավիտյան յեղա անձնատուր։
Մոռացության մեջ՝ քո կրծքի վրա
Կարճատև յեղավ հանգիստն աղջկա
Քիչ գիշերների բաժին խինդավառ
Ճակատագիրը ուղարկեց նրան։
Յեվ կգա՞ն արդյոք յերբևե ելի,
Թե՞ հավետ կորավ ամեն խնդություն...
Դու կարող եյիր և խաբել դերի,
Միամիտ, անփորձ իմ ջահելությունն,
Թեկուզ և միայն խղճալով հենց ինձ,



Լռությամբ և կեղծ գուրգուրանքներով,
Կամոքեյի քո վիճակը նորից
Ինքույդ, հնազանդ իմ խնամքներով.
Յես կհսկեյի պահերը քնի,
Անդորրը վշտոտ իմ բարեկամի.
Դու չցանկացար... Սակայն ո՞վ ե, ո՞վ
Քո հիանալի այդ ընկերուհին։
Դու սիրո՞ւմ ես, ռուս, և սիրվա՞ծ ես դու...
Հասկանում եմ յես քո տանջանքն ահա,
Դե ներիր դու ել իմ լացն հեկեկուն,
Մի ծիծաղիր իմ վշտերի վրա»։

Լռեց։ Հառաչն ու արցունքները ջերմ
Խեղդեցին կուրծքը թշվառ աղջկա։
Շուրթերը անխոս տրտնջացին մեղմ,
Գրկելով գերու ծնկներն, անբզգա՝
Հազիվ շունչ քաշել կարողացավ նա։
Յեվ հանդարտ ձեռքով գերին հանեց վեր
Դժբախտ աղջկան ու ասաց նրան.
«Մի լա, յես ել եմ բախտից հալածվել,
Յեվ կրել սրտի տանջանքներ այնքան...
Վոչ, փոխադարձ սեր չեմ իմացել յես.

Սիրել եմ մենակ, տանջվել եմ մենակ,
Ցեվ մարում եմ յես ծխող բոցի պես՝
Խուլ հովիտներում, մոռացության տակ։
Կմեռնեմ՝ հեռու ափերից սիրած,
Այս տափաստանն ինձ կլինի գերեզման,
Այստեղ, վոսկերքիս վրա հալածված՝
Կժանգակալի իմ ծանր շղթան»։

Լուսատուները գիշերվա հանգան.
Թափանցիկ հեռվում նշմարվում էին,
Ձյունի պես ճերմակ կույտեր լեռնային.
Նրանք՝ հայացքը ներքև, գլխահակ,
Լուռ անջատվեցին, անխոս հեռացան։

Այդ ժամանակից հուսահատ գերին
Շրջում եր մենակ աուլի բոլոր։
Արշալույսը ասպ յերկնակամարին
Բարձրացնում է նոր որեր որեցոր.
Ցեվ հաջորդում է գիշերն գիշերին.
Ազատություն զուր է տենչում գերին։
Հենց վոր շողում է քարայծ թփերում,
Հենց վոր ցատկում է մի վիթ մութի
տակ,



Բռնկվում է նա, շղթան զնգացնում,
Սպասում՝ թե չի պահվում մի կազակ—
Նա, վոր գիշերով ավրում է գյուղեր,
Նա, վոր անվեհեր փրկում է ճորտեր։
Կանչում է... Լուռ է չորս կողմը սակայն,
Լոկ ալիքներն են ճողփում մոլեգնած,
Իսկ գազանն ահա մարդու հոտ առած
Փախչում է դեպի դաշտը մթամած։

Լսում է այդ ռուս գերին՝ մի անգամ,
Լեռներում հնչում է կանչ ռազմական.
«Դեպի ջոկ, թաբուն»—վազում են,
կանչում,
Պղնձե սանձերն են զնգում, շաչում,
Սև յափունջիներ, փայլ զրահների,
Ցեռանդն է յեռում թամբած ձիերի,
Պատրաստ է աուլն արդեն հարձակման,
Ցեվ պատերազմի վորդիք վայրենի
Բլրից վորպես գետ, հորդեցին, անցան,
Ցեվ սլանում են ափով Կուբանի
Դանձելու համար տուրքերը բռնի։

Աուլն հանդարտվեց. խրճիթների մոտ

Հսկող շներն են քնած արևում։
Ու մանուկները թխլիկ ու ակլոր։
Աղատ աշխուժով զիլ են աղմկում։
Նրանց պապերն են շուրջ բոլոր նստած՝
Ջիրուխի ծուխն է կապտում վոլորքով,
Լսում են նրանք անշշուկ, լարված,
Յերգն աղջիկների ծանոթ կրկներգով
Ու ջահելանում է սիրտը նրանց։

## ՁԵՐԲԵԶԱԿԱՆ ՅԵՐԳ

1

Գետում վազում է ալիքը խշշուն,
Լեռներում անդորրն է գիշերային.
Հոգնարեկ կաղակն է ահա ննջում,
Կռանալով իր պողպատ նիզակին։
Մի քնիր, կաղակ, գիշերվա մութին՝
Ձեչենն է քայլում գետի այն ափին։

2

Կաղակն է լողում ահա նավակով,
Քաշ տալով ջրում գետային ուռկան։
Կաղակ, կխեղդի գետը հորձանքով,



Խեղդում է ինչպես նա փոքրիկ մանկան՝
Ցերբ լողում է նա շոգ ժամանակին.
Ձեչենն է քայլում գետի այն ափին։

3

Ավանդական այդ ջրերի ափին
Ծաղկում են փարթամ ու հարուստ
շեներ։
Պարերի խումբն է պարում խնդագին։
Փախեք դուք արագ, ռուս յերգչուհիներ.
Դեղեցկուհիներ, վազեք տուն կրկին.
Ձեչենն է քայլում գետի այն ափին։

Այդպես յերգեցին։ Յեվ նստած ափին,
Ռուսն յերազում եր փախչելու մասին.
Բայց շղթաները շատ ծանր են գերու,
Գետն արագահոս, խորունկ ու յեռուն...
Մինչ այդ՝ մութն ընկավ, աուլն մտավ
քուն,
Ժայռագագաթներն մռայլ են ահա,
Շողում են լուսնի լույսերը դժգույն
Աուլի ճերմակ հյուղերի վրա.
Ցեղջերուներն են ջրափին ննջում,

Լռեց ուշացած կանչն արծիվների,
Յեվ արձագանգում է խուլ լեռներում
Հեռավոր դոփյունն յերամակների։
Այդ պահին լսվեց ինչ վոր ձայն մեկի,
Ինչ վոր աղջկա քողը շողշողաց,
Յեվ ահա տխուր դալկություն դեմքին՝
Մոտեցավ գերուն աղջիկը կամաց։
Շուրթերն սիրունի փնտրում են խոսքեր,
Թախիծով լի յեն աչքերը նրա,
Թափվում են ինչպես սև-սև ալիքներ
Վարսերն իր կրծքի, ուսերի վրա։
Մի ձեռքին նրա սողոցն եր փայլում,
Մյուսին դաշույնը նրա պողպատյա,
Թվում եր՝ կարծես, աղջիկը՝ թաքուն,
Կռվի յեր գնում, ռազմի քաջության։

Յեվ հառելով իր հայացքը գերուն
«Փախիր դու,—ասաց կուսյսը լեռների—
Ձերքեզ դեմ չի գա քեզ վոչ մի տեղում,
Շտապ, մի կորցնի ժամերն գիշերի։
Վերցրու դաշույնը։ Թանձր խավարում
Վոչ վոք հետքերը քո չի նշմարի»։



Սղոցը բռնած դողդողուն ձեռքին,
Աղջիկը թեքվեց վոտներին նրա։
Յերկարն է խզզում սղոցի տակին,
Թափվում է նրա արցունքն ակամա,
Յեվ շղթան պոկվում, զնգում է ահա։
«Ազատ ես—ասաց աղջիկը գերուն—
Փախիր» —սակայն խենթ հայացքը նրա
Արտահայտեց խոր սիրո ուժգնություն։
Տառապում եր նա։ Ամիկոտ քամին
Սուլելով՝ նրա քողն եր ծածանում։
Ռուսն աղաղակեց—«Ո, բարեկամ իմ,
Քոնն եմ, հավիտյան յես քոնն եմ մնում,
Թողնենք յերկուսով հողն այս տանջանքի,
Փախիր դու ինձ հետ»...—Վոչ, ռուս, վոչ,
յերբեք։
Անհայտացավ նա՝ քաղցրություն կյանքի,
Տեսա ամեն ինչ, տեսա խնդություն,
Ամեն ինչ անցավ, չքացավ և հետք։
Կլինի՞... սիրել ես դու ուրիշին,
Դու գտիր նրան և սիրիր նրան։
Իսկ յես թախծում եմ ել ինչի՞ մասին,
Ի՞նչ պատճառ ունեմ յես վհատության...
Ներիր ինձ... Սիրո որհնությունները

Կըլինեն քեզ հետ յուրաքանչյուր ժամ։
Ներիր, մոռացիր իմ տանջանքները,
Տուր ինձ քո ձեռքը... մի վերջին
անգամ»։

Գերին ձեռները պարզեց աղջկան,
Կյանք առած սրտով դեպի նա նետվեց,
Յեվ նրանց յերկար համբույրն
անջատման։
Իրենց սիրային դաշինքն հաստատեց։
Ձեռք-ձեռքի տված, վհատությամբ լի,
Խոր լռության մեջ ինչպես գետի ափ—
Յեվ ոուսը խորքի մեջ աղմկալի
Արդեն լողալով փրփուր է տալի,
Արդեն հասավ նա ժայռերը դիմացի,
Արդեն բռնում է նրանցից գերին...
Ալիքներն հանկարծ խուլ աղմկեցին,
Յեվ հեռու տնքոց հասավ ափերին...
Նա վայրի ափն է ահա դուրս գալի,
Նայում է յետև... Ափերը պարզել,
Ճերմակել եյին փրփուրներով լի,
Բայց չկար չերքեզ աղջիկը ջահել,
Վոչ ափին և վոչ լեռան լանջերին...



Ամեն ինչ մեռած... Ինած ափերում
Լսվում է թեթև լոկ ձայնը քամու,
Յեվ լուսնի ներքո ճողփուն ջրերում
Շերտավոր շրջանն է անհայտանում։

Բոլորն ըմբռնեց...
Հրաժեշտ տալով
Վերջին հայացքի մեջ է ընդգրկում
Դատարկ աուլն իր ցանկապատերով,
Դաշտերն, ուր գերին նախիրն եր
պահում,
Կածաններ, ուր նա կրում եր շղթան,
Առուն, ուր հանգչում եր նա կեսորին,
Յերբ յելած դաժան չերքեզը լեռներ,
Ծայր եր տալիս իր աղատ յերգերին։
Նոսրացավ խորունկ խավարն յերկնքում
Յեվ որը փռվեց մռայլ դաշտերին։
Արշալույսն յելավ։ Կածանով, հեռվում,
Ճամբա յեր կտրում ազատված գերին։
Արդեն մշուշում նրա դիմացից
Սվիններն եյին փայլում ռուսական,
Յեվ ձայնում եյին իրար թումբերից
Կազակներն այնտեղ կանգնած պահապան։

## ՎԵՐՋԵՐԳ

Յեվ մուսան, թեթև ընկերն յերազի,
Սահմանն Ասիայի թռչում եր ահա,
Յեվ իր պսակի համար Կովկասի
Վայրի ծաղիկ եր քաղում, բերում նա։
Նրան գերում եր հազուստը դաժան
Պատերազմներում աճած ցեղերի,
Յեվ հաճախ այդ նոր հազուստը վրան՝
Ներկայանում եր ինձ կախարդուհին.
Ամայի դարձած առվների շուրջ
Նա թափառում եր քարաժայռերում,
Յեվ այդ վայրերում վորը աղջիկների
Տխուր յերգերն եր միայն ունկնդրում։
Սիրում եր նաև շեներն ռազմական,
Ազդանշաններ քաջ կազակների,
Թումբերը խաղաղ, շիրիմ, գամբարան,
Յեվ աղմուկ, խրխինջ յերամակների։



Դիցուհին յերգի և զրույցների
Լի յե հուշերով իր բազմապիսի,
Գուցե թե կրկին կպատմի, կասի
Ավանդություններն ահեղ Կովկասի։
Կպատմի վեպը հեռավոր յերկրի,
Յեվ Մստիսլավի մենամարտը հին,
Դավեր, կործանում բազում ռուսների
Վրեժխնդիր վիր կանանց գրկերին։
Յեվ յերգում եմ յես փառավոր ժամն այն,
Յերբ վոր զգալով մարտն արյունարբեր,
Այդ արտնջացող Կովկասի վրան
Մեր յերկգլխանի արծիվն յելավ վեր,
Յերբ վոր Թերեքի վրա ալեհեր
Թնդաց առաջին վորոտը մարտի,
Յեվ զղրդացին ռուսաց թմբուկներ,
Յեվ կռվի բովում Ցիցիանովը մեր,
Հայտնվեց ահա ճակատով անվեհեր.
Ո, հերոս, քեզ եմ յերգում հիմա յես
Կոտլարեվսկի, Կովկասի մարտակ—
Ուր սլացել ես դի լոռթորկի պես՝
Ամեն ընթացքդ՝ վորպես սև վարակ—
Ցեղեր և ջնջել և վոչնչացրել...
Լքել ես՝ սուրդ վրեժխնդրության,

Պատերազմը քեզ չի ուրախացնում.
Պատվի խոցելով կարոտ հանգստյան,
Պարապ հանգիստն ես հիմա վայելում,
Խաղաղությունն ու լռությունը տան...
Բայց արևելքն է հառաչում ելի...
Կովկաս, խոնարհվիր ձյունապատ գլխով,
Հանդարտ, Յերմոլովն է ահա գալի։
Յեվ լռեց կռվի աղմուկը մոլի։
Ամեն ինչ ռուսաց սրին հպատակ.
Կովկասի վորդիք, հպարտությամբ լի,
Դուք մարտնչեցիք, սոսկալի ընկաք.
Սակայն չփրկեց ձեզ արյունը մեր,
Վոչ զրահները ձեր կախարդական,
Վոչ լեռները, վոչ ձեր ձիերն անվեհեր,
Վոչ սերը վայրի ձեր ազատության։
Բատիի ցեղի նմանողությամբ,
Կուրանա Կովկասն իր նախնիքներին,
Կմոռանա ձայնն ազահ մարտերի,
Վերջ կդնի իր կռվի նետերին։
Յեվ ճամբորդն առանց վախի կգնա
Կիրճերով, ուր դուք դրել եյիք բուն,
Յեվ ձեր պատժի շուրջ կհյուսվի ահա
Լուրերի մթին մի ավանդություն։

Թարգմ. Գ. Սարյան
Պատ. խմբագիր՝ Գ. Աբով
Տեխ. խմբագիր՝ Լ. Ոհանյան
Սրբագրիչներ՝ Հ. Մանուկյան և Հ. Դոլուխանյան

Տրված է արտադրության 7 փետրվարի 1937 թ.
Ստորագրված է տպագրության 27 փետրվարի 1937 թ.
Գլավլիտի լիազոր 4—4506 Պատվեր 217, Հրատ. 9018
Տիրաժ 3000

Պետտրատը տպարան, Յերևան II Կնունյանցի, № 4

ՀՍՍՀ-ՍՍՀ

4089

«Ազգային գրադարան»
NL0333030

13. 128

891. 71.
7-97